

Որեւէ առարկայի վերաբերյալ մեր մտքերում կատարյալ պարզություն մտցնելու համար մենք միայն պետք է հաշվի առնենք այն հնարավոր գործնական (պրակտիկ) արդյունքները, որ այդ առարկան կարող է ունենալ, այն զգացումները, որոնք կծնվեն եւ այն հակազդեցությունը, որը պետք է պատրաստենք: Այս արդյունքների մասին մեր հասկացողությունը, լինի այն ուղղակի թե անուղղակի տվյալ առարկայի վերաբերյալ մեր ողջ հասկացողությունն է այնքանով, որքանով այդ հասկացողությունը ընդհանրապես ունի որեւէ դրական կարեւորություն (նշանակություն):

Ջարմանալի է, թե որքան իմաստասիրական վեճեր կարող են արժեզրկվել, երբ փորձենք մատնանշել նրանց հստակ հետեւանքները: Որեւէ ոլորտում առկա ինչ-որ տարբերություն չի կարող տարբերություն չտալ որեւէ այլ ոլորտում: Աբստրակտ ճշմարտություն մեջ չկա որեւէ տարբերություն, որն իբրեւ տարբերություն չարտահայտվի կոնկրետ փաստի եւ նրանից բխող վարքի պարագայում՝ կիրառված ինչ-որ մեկի նկատմամբ, ինչ-որ ժամանակ, ինչ-որ ձեւով, ինչ-որ տեղ: Իմաստասիրության ամբողջ գործառույթը պետք է լինի այն հստակ տարբերության պարզումը, որը գոյություն ունի ինձ եւ քեզ համար, եթե, կյանքի որոշակի պահերի, այս կամ այն համընդհանուր բանաձեւը ճշմարիտ լինի:

Սա ամենեւին էլ նորույթ չէ պրագմատիկ մեթոդի համար: Սովորաբար դրանում հմուտ էր: Արիստոտելն այն օգտագործում էր պարբերաբար: Լոկը, Բերկլին եւ Հյումը դրա միջոցով կարեւոր ներդրումներ են կատարել ճշմարտության բացահայտման համար:

Աշխարհն ի՞նչ առումներով կարող է տարբեր լինել, եթե այս կամ այն այլընտրանքը ճշմարիտ լիներ: Եթե ես չեմ կարող գտնել, նշել որեւէ փոփոխություն, ապա այլընտրանքն անիմաստ կլինի:

Իմաստասիրության մեջ պրագմատիզմը առաջադրում է բավականին ծանոթ մի մոտեցում՝ էմպիրիկ մոտեցում, սակայն, ինչպես ինձ է թվում, ավելի արմատական եւ ընդունելի ձեւով քան երբեւէ: Պրագմատիստը միանգամայն ժխտում է արհեստավարժ փիլիսոփաներին հարազատ կարծրացած սովորություններից շատերը: Նա մերժում է արստարկցիան եւ անբավարարությունը, բանավոր լուծումները, վատ *a priori* պատճառաբանումները, ֆիքսված սկզբունքները, փակ համակարգերը, թվացյալ բացարձակները եւ սկզբնադրյունները: Նա ողջունում է կոնկրետությունը եւ նպատակահարմարությունը, փաստերը,

գործողությունները, իշխանությունը: Մա նշանակում է էմպիրիկի հոգեվիճակի գերակայություն եւ ռացիոնալիստի հոգեվիճակից հրաժարում, բնության լայն հնարավորությունների օգտագործում, ի տարբերություն դոգմաների, արհեստականի եւ ճշմարտության վերջնական լինելու պատրանքի:

Միեւնույն ժամանակ, այն չի տալիս հստակ արդյունքներ: Այն պարզապէս մեթոդ է: Սակայն այդ մեթոդի հաղթանակը կբերի հսկայական փոփոխություն իմ նախորդ դասախոսությունում նշված “փիլիսոփայության խառնվածքում”:

Եթէ հետեւես պրագմատիկ մեթոդին, ապա չես կարող բառի հայտնաբերմամբ ավարտել քո որոնումները: Ամեն մի բառից պետք է ստանաս իր պրակտիկ արժեքը, քո փորձառությամբ գործի դնես այն: Դա ոչ այնքան լուծում է, որքան հետագա գործունեության ծրագիր, որքան առկա իրականությունը փոփոխելու հնարավորությունների դրսեւորում:

Այդպէս տեսությունները դառնում են գործիքներ, եւ ոչ առեղծվածների պատասխաններ, որոնցով կարող ենք բավարարվել:

Մեր մտքերի ճշմարտությունը նրանց “աշխատելու” ունակությունն է:

Տիպիկ ինտելեկտուալ մտքի համար այս պրագմատիկ խոսքերը ճշմարտության բազմազանության մասին, նրանց օգտակարության եւ գոհացուցիչ (բավարար) լինելու, նրանց հաջող “գործելու” մասին թվում են մոտավոր, պայմանական դիտարկումներ, որոնք ոչ մի առընչություն չունեն ճշմարտության հետ: Նման դիտարկումները սուբիեկտիվ են: Ի տարբերություն սրա, օբիեկտիվ ճշմարտությունը պետք է լինի ոչ օգտապաշտ, ինքնաբավ, նուրբ, վսեմ, փառավորված: Այն պետք է լինի մեր մտքերի բացարձակ համապատասխանեցումը նույնքան բացարձակ իրականության հետ: Դա պետք է լինի այն, ինչ մենք պետք է մտածենք, առանց պայմանների: Մեր մտածելակերպի սահանված ձեւերը կարելու չեն: Դա հոգեբանության խնդիրն է: Կորչե՛ հոգեբանությունը, կեցցե՛ տրամաբանությունը, այս բոլոր հարցերում:

Տե՛ս մտքի տեսակների նուրբ տարբերությունները: Պրագմատիստը կարչում է փաստերից եւ հստակությունից, դիտարկում է ճշմարտությունը գործնականում եւ կատարում ընդհանրացումներ: Ճշմարտությունը նրա համար բոլոր այն երեւոյթներն են, որոնք գործնականում արժեք ունեն: Ռացիոնալիստի համար ճշմարտությունը մնում է պարզ աբստրակցիա, որի անունը պաշտամունքի առարկայի են վերածել: Երբ պրագմատիստը փորձում է մանրամասն պարզել, թե ինչու պետք է հարգենք ճշմարտությունը, ռացիոնալիստը ունակ չէ գիտակցել այն կոնկրետ երեւոյթները, որոնցից

բխում է իր արստրակցիան: Նա մեղադրում է մեզ ճշմարտությունը ժխտելու մեջ, երբ մենք պարզապես փորձել ենք պարզել, թե ինչու են մարդիկ հետեւում ճշմարտությանը, եւ ինչու պետք է միշտ հետեւեն: Տիպիկ ուլտրա-արստրակցիոնիստը սարսափում է հստակությունից: Միանման պայմաններում, նա նախընտրում է գունատն ու եթերայինը: Եթե նա կանգնած լիներ երկու աշխարհերի ընտրության առջեւ, նա անպայման կընտրեր բարակ ուրվագիծը խիտ մացառոտ իրականության փոխարեն: Այն շատ ավելի պարզ է, վճիտ, վեհ:

Ռացիոնալիզմը կապված է տրամաբանության եւ դրախտայինի հետ: Էմպիրիզմը կառչած է արտաքին զգայարաններից: Պրագմատիզմը պատրաստ է ընդունել ցանկացած օգտակար բան, հետեւելու թե՛ տրամաբանությանը, թե՛ զգայարաններին եւ հաշվի առնելու ամենահամեստ եւ անձնական փորձառությունները: